

ԳՐ. ՌՈՐԱՔԻՉԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԻ ՎՐԱ /1929թ./

Վրաց անվանի գրող, ակադեմիկոս Գ. Ցիցիշվիլին նշում է. «Պետական, կրոնական և ազգային անկախության համար պայքարող վրաց ժողովուրդը տասնյակ դարերի ընթացքում հետևողականորեն և անընդհատ պայքարում էր տարբեր ազգություն, հավատ և սոցիալ-տնտեսական կարգ ունեցող ժողովուրդների միջև լայն, հիմնավոր, անսահմանափակ գրական-մշակութային հարաբերությունների, որպես հոգևոր կատարելագործման և մշակութային առաջընթացի հզոր միջոցի համար...» (1.87):

Այս տեսակետից պետք է առանձնահատուկ հիշատակել վրաց-հայկական գրական հարաբերության բազմադարյան պատմությունը:

Եթե նախատեսենք XX դարի առաջին կեսի ոչ միայն զուտ քաղաքական բնույթի մամուլը, այլև գրական թերթերի, ամսագրերի, ժողովածուների բովանդակությունը, հստակորեն կնկատենք վրաց գրականության կապը այլ ժողովուրդների գրողների հետ: Առանձնապես պետք է նշել հայ-վրացական գրական կապերի ինտենսիվությունը:

Եթե վերցնենք անվանի վրացի հայագետ պրոֆ. Բ. Արվելաձեի աշխատությունը, որի «նպատակն է հնարավորության սահմաններում ներկայացնել, թե ինչպես էր արձագանքում հայկական սովետական պարբերական մամուլը վրաց ժողովրդի ամենօրյա գրական-մշակութային կյանքին» (2,72), կամ թերթնք հայտնի հետազոտող պրոֆ. Արտաշես Մխիթարյանի աշխատությունները, որոնց մեջ քննարկված է Թբիլիսիում հրատարակվող հայկական պարբերական մամուլում տպագրված հարուստ նյութը, որտեղ կարդում ենք. «Թբիլիսյան հայկական գրական կյանքը հիմնականում կապված էր «Հայաստանի» հետ, ավելի ճիշտ նրա գրական բաժանմունքի հետ և Վրաստանի պրոլետարական գրողների միության հայկական բաժանմունքի գործունեության հետ» (3, 52), կտեսնենք, որ բոլոր պաշտոնական բնույթի հոգվածներում, տեղեկություններում խիստ զգացվում է այն ժամանակաշրջանի ոգին:

Ինչպես որ Ավ. Իսահակյանի, Դ. Հակոբյանի, Ալազանի, Տ. Տաթևեի, Ս. Զիքովանիի և այլոց ստեղծագործություններում գեղարվեստական խոսքի մեծ վարպետների ենք տեսնում, հոյակապ նկարիչների, հրապարակախոսների,

ապա, մեր կարծիքով, նույնպիսի բարձր գնահատական պետք է տրվի Գրիգոր Ռոբաքիձեին իր հիմնալի «Հայաստան» ուրվագծի համար (ամսագիր «Վրաց գրականություն»)։

Հենց առաջին տողերից գրողը մեզ տանում է հայոց իրականություն, իսկական հայկական միջավայր։ Մեծ արվեստով է ներկայացված փոքրիկ գյուղի համայնապատկերի մեջ Հայաստանի հնագույն պատմությունը։ «Առաջինը, ինչ որ կզգաս, երբ ոտքով կդիպչես Հայաստանի հողին, հնությունն է... Ներքևում, գետի (Արփաչայի մասին է խոսում գրողը) ափին փոքրիկ գյուղ է կառուցված։ Տները «հողաշեն» են... Կենտրոնում հին եկեղեցին է... Մի մեծաբեկորի վրա Ուրարտուի թագավորներից մեկի մակագրությունն է։ Պատմության հետքը խարանի պես երևում է հողի վրա։ Աչքի առաջով թռչում են դարերը, հողը ննջում է, կարծես անցյալն է հիշում... Բնությունն այստեղ պատմության կերպարվեստական դեմքն է... Տարածությունն այստեղ հոգևոր բնապատկերի է փոխակերպվում։ Հայաստանի մշակույթը փռվել է բնապատկերի նման, բնությունն ու պատմությունը միաձուլվել են երկվորյակների պես» (4,3)։

Տեղեկագրական բնույթի են «Դիլիջան» և «Սեմյոնովկայի լեռնանցքը» հատվածները։ Մեծ արվեստագետի աչքով է տեսնում հեղինակը Սևանա լիճը, «երկնագույն հրաշք» անվանում նրա երևալը։ Հենց այս լճի ու նրա շրջակայքի հետ են կապված նրա «Տեսիլքներ»-ն ու «Ամսապատկերի հրաշքներ»-ը։

Փոխաբերությունների, համեմատությունների ամբողջ լուսապատկեր է ժայթքում առաջին տեսիլքում. «Եգիպտոսի շափյուղա թե՛ Հնդկաստանի զմրուխտ. չգիտես որն ընտրես։ Ավելի շափյուղան՝ հազար տեսակ փայլ, հազար տեսակ ցուլ։ Հաճախ փայլփլող լուսապսակում հեքիաթային թևերով գծած շերտեր կան նախամարդու զգած ցանցեր... Լճի մակերևույթը՝ հայելի։ Բնության հայացք։ Հայաստանի աչք... Հսկա ժայռերը կառչած են լճին՝ նախապատմական գազանի նման...» (4,5)։

Հեղինակի հաջորդ տեսիլքն ավելի առեղծվածային բնույթ է ստանում, այն շուտով վերադառնում է իրականությանը, գետին է իջնում երկնքում սավառնող անուրջը. «Այժմ թվում է, թե երկնքից պոկվեց մի հատված և որպես զմրուխտ թե շափյուղա թափվեց այն լեռներում...

Երկնքի լազուր, որպես լիճ բացված... Սիրտը երգել է ուզում... Այսպիսին է Սևանը։

Չես կարող այստեղ չուրախանալ. չերգել, չես կարող չտրտմել և չլացել...

Այժմ նոր եմ հասկանում Ավ. Իսահակյանի՝ ժամանակակից Հայաստանի քնարերգուի գրքի անվանումը՝ «Երգեր և վերքեր»:

Իսկապես երգեր և իսկապես վերքեր:

Իսկապես երգեր և իսկապես վերքեր՝ միասին:

Հիմա նոր եմ հասկանում Հովհ. Թումանյանի խոսքը... Սևանի աչքի մեջ Հովհաննեսի բազում բանաստեղծական տեսիլքներ են ընդգրկված» (4,6):

Բոլորովին այլ դիրքերից է բացվում Սևանի թեման «Հին աստվածներ» և «Մամուռ-ժանգ» հատվածներում: Առաջինում հաղորդված է տպավորություն Սևանա լճի կղզու հին վանքի մասին: Նույն տեղում պատվում է գեղեցիկ լեզենդ՝ վանքում աղոթող վանականի և իշխանի կնոջ՝ սքանչելի իշխանուհու, սիրո մասին: Եվ կրկին բնապատկեր:

Ոչ պակաս հուզական է Արարատի թեման: Սևանից հետո պատգամավորներն ուղղվում են դեպի Երևան: Տխուր էին, որ հեռանում էին Սևանից, հանկարծ նրանց առջև վեր է խոյանում ճերմակահեր «Արարատն իր որդու հետ»:

Իրեն հատուկ եռանդով է կիսում մեզ հետ իր տպավորությունները Գր. Ռոբբաքիժեն: Սա լոկ թղթակցական լրագրահաղորդում չէ կամ սովորական լրագրային գրառում: Սա զարմանահրաշ պոեզիա է: «Ավելի անպարտելի լեռ կա քան Արարատը, օրինակ մեր Մղինվարին: Բայց Արարատի մեջ կա ինչ-որ անկրկնելի բան: Նա էլ է անպարտելի, բայց միայնակ է»: Այս մենակությունն ավելի է ընդգծում «փոքր Արարատը»: Կարծես որդին զգում է. ծերացել է հայրը և օգնություն է խնդրում: Կանգնած է կողքին՝ հեռու-մոտիկ, բայց հայրը դեռ պինդ է կանգնած և ցույց չի տալիս իր թուլությունը. և մենակ է, մենակ է նա և ճիշտ որ դուրս է բերված «կենցաղի գրքից»: Որևէ երազողի աչքին հիմա էլ մի պահ կարող են երևալ Նոյի տապանից դուրս ճախրող աղավնիներ, որոնք պիտի իմանան իջել է արդյո՞ք ջուրը, թե՞ ոչ: Երբ նայում ես Արարատին, հեշտությամբ կարող ես հասկանալ այդ երազանքը (4, 8):

Հյուրի մոտ անսահման թախիժ առաջացրեց մոտիկից Արարատյան դաշտավայրի տեսնելը, վիրավոր սրտի թախիժ և վրացի մարդու էության մեջ վեր խոյացավ Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը:

«Արևելյան բանաստեղծը՝ լի արևի տեսիլքով և ամենայն բարությամբ, անսպասելիորեն հավաքվում է և քարավանով ուղևորվում. ինչ-որ տեղ, դեպի

ուր, ինքն էլ չգիտի, միայն թե քայլի, միևնույն է, ում կհանդիպի, ինչի դեմ կառնի, միայն թե քայլի, միայն թե ծուլվի անսահմանությամբ» (4, 9): Սա է հանրահայտ բանաստեղծական գլուխգործոցի կարծ, լակոնիկ լուսաբանությունը, նրա օբյեկտիվ վերլուծությունը: Այնուհետև դուրս են ժայթքում ամմիջական ապրումներ, ներքին մղումներ: Բանաստեղծը ծայնակցում է բանաստեղծին. «Երբեմն սիրտը չի տեղավորվում իր տեղում. կամենում է դուրս պրծնել:

Աբու-Լալա Մահարին սիրտ է՝ լի վշտով, լի կսկիծով:

Հուզված է Արարատյան դաշտավայրում: Կարծես փրկություն չկա»:

«Կարծես փրկություն չկա», ճիշտ որ, այս հոգեճմլիկ հուզմունքից ինչպես է հանգստանում ամեն ինչ, հանդարտվում, որքան հողեղեն է դառնում, երբ հեղինակը մոտենում է Էջմիածնին: Պատմելաձևը հանգիստ է, զգացվում է հարգանք նրա նկատմամբ. «Էջմիածնի մասին հատորներ կան, հռչակավոր գրադարան՝ ամբողջ Արևելքի հպարտությունը: Տասը հազարից ավել ձեռագիր, հաստափոր գրքեր, գրքերում մանրանկարներ և այլն»:

Հեղինակի ուշադրությունից զերծ չի մնում հայկական ճարտարապետության հրաշալի մոուլը՝ Հռիփսիմնի տաճարը: Փորձված ճարտարապետի աչքով է ներկայացնում մեզ Գր. Ռոբաքիձեն Էջմիածնի տաճարի մի կարևոր մանրամասն, որով կարծ, կտրուկ և հստակորեն ընդգծում է նրա անկրկնելիությունը. «ճարտարապետական աչքաչափով այս տաճարն այնպես է կառուցված, կարծես թե ոչ թե գետնից է վեր խոյանում, այլ՝ երկնքից է իջած գետին, որպես քարե ցանց»: Ինչպես տեսնում ենք, այստեղ բանաստեղծ-ճարտարապետն է խոսում: Նույն տեղում կարեկցանքով է հիշում պատմության սարսափները: Կոնկրետ ինչպես ոչնչացրին փախստականները. Էջմիածնի մոտակա անտառը և ինչպես ոչնչացան իրենք, փախստականներն էլ (30 000 փախստական)՝ անօգնական, անտուն, հիվանդ և քաղցած (4,9):

Մեծ տեղ է տրամադրված ստեղծագործության մեջ «Զվարթնոց» թեմային. «Զվարթնոցը Սևանի հետ է մրցում, մրցում է իր գեղեցկությամբ և պատմական անցյալով»: Սկսենք սկզբից. «Էջմիածնի մոտ փլատակներ կան, այստեղ կառուցված է եղել հին արքայական քաղաք Վաղարշապատն էլ»: Փլատակներում տաճար են հայտնաբերել: Այն էլ է փլատակ: Պատերն էլ չկան: Միայն քարեր են թափված» (4,10):

Սրանից հետո հեղինակի պատկերները քարերի աղաղակ են հիշեցնում, քարերի երգի և քարերի սիմֆոնիայի բառային պարտիտուր: Յուրա-

քանչյուր քարի մեջ (իսկ այսպիսին հեղինակը տասնյոթն է՝ ընտրել) կարողում ենք բոլորովին տարբեր մեղեդի: Հեղինակը, նրանցից յուրաքանչյուրը նկարագրելիս, չի խնայում հիանալի մակդիրներ, համեմատություններ, փոխաբերություններ. «Շատ են վազի թփերով և ողկույզներով քարերը, երևում է տաճարի շինության մեջ մտել են հեթանոսության մշակներ»: Հեթանոսության հետքեր է տեսել հեղինակը այն քարերում, որոնց վրա նուռ և արծիվ է փորագրված, արծիվը միգլխամի է: Երեք քար է նկատել մարդկային կերպարանքով, մուրճերով, թափով:

Ամեն մի մարդու մեջ շինարար է պատկերված: Նույն տեղում կա «տարօրինակ քար՝ մարդ և առյուծ, քարը կոտրած՝ արևի մեծ ժամացույց, խաղաղական սեպագիր քար այսպիսի մակագրությամբ. «Ռոսեն՝ Վանի թագավորը (մ.թ.ա. VIIIդ) գրավեց Կուիդա երկիրը, կառուցեց քաղաք, այգի, աստվածներին զոհեր մատուցեց, քարը մուգ կապույտ գրամիտ է » (4.10):

Պակաս հետաքրքրական չէ մյուս մեծ սևավուն քարն էլ՝ հունարեն մակագրությամբ. «Ներսեսը կառուցեց, հիշեցե՛ք: Ներսեսը կաթողիկոս է եղել: Նա է կառուցել այս տաճարը» (4, 11): Այնուհետև տալիս է ամբողջ կառույցի մնացորդների նկարագիրը: Նկարագրության ժամանակ հեղինակը չի կարողանում թաքցնել իր տրամադրվածությունը և ասում է. «Այստեղ ամեն քար ինքը տաճար է, շարունակում է առանձին ապրել... Ամեն մի այցելու այստեղ իր պատկերացմամբ տաճար է տեսնում: Տեսիլքներն այստեղ բազմապիսի են և բոլորն էլ՝ անկրկնելի... Քարեր, քարեր և քարերի մեջ՝ անձեռնմուխ տաճար: Հայաստանի ճարտարապետական հանճարը Ձվարթնոցի մեջ է...» (4, 12):

Ինչպես նշել է գրողը. «Դերասանական հայացքն, այս փլատակներին նայելով, կարող է երևակայել «Հայաստանի ճակատագիրը», իհարկե, այլ պատկերներով: Ինչ խոսք, «Հայաստանի ճակատագիրը լի կլինի ողբերգականով» (4, 12):

«Մշակութային ուժեր» գլխում գրողը նշում է, որ Հայաստանի այն ժամանակահատվածի մշակույթի վերածնության գործընթացում մեծ դեր են կատարել հայրենադարձները:

«Նոր Երևանը» գլխում հեղինակը մանրամասնորեն ներկայացնում է, ակադեմիկոս Թամայանի կողմից մշակված, Երևանի շինարարության ընդարձակ և հիմնավոր պլանը:

Մեզ համար բավականին հետաքրքրական է հեղինակի կարծիքը հայկական երգի և պարի մասին: Չենք սխալվի, եթե ասենք, որ գործ ունենք իսկական գեղագետի հետ, համարյա պրոֆեսիոնալի հետ, մանավանդ, երբ ծանոթանում ենք նրա մտքերին հայկական երգի, ապա՝ հայկական պարի մասին:

Նա գրել է. «Ադրբեջանում էլ, Պարսկաստանում էլ թառ նվագում են արտիստորեն, դատարկվում է այրված սիրտը, բայց, երբ հայն է նվագում թառ, սրտի վերքին ձեռքով է դիպչում:

Այսպիսին է նրա երգն էլ. վշտոտ, տխուր... Հայկական երգի մեջ մեներգն է ուժեղ, խումբը՝ թույլ» (4, 18):

Նույն տեղում զարմանք է արտահայտում, երբ գնահատում է հայկական պարը. «... Բոլորովին այլ է հայկական պարը: Ոչ մի վիշտ: Ընդհակառակը. ազատ է, անկախ... Հայկական պարի մեջ մենապարը թույլ է, իսկ խմբայինը՝ ուժեղ: Ձմայլեցնում է նրանց շրջապատը: Այս շուրջպարը հաճախ ծնվում է աշխատանքային ռիթմերից... Երբ հետևում ես այդ ռիթմերին, կարծում ես՝ քանդակագործ ես» (4, 18):

Այսօրվա հայեցակետից շատ բան է հնարավոր վերագնահատել նորովի, կարող է շատ զաղտնիքներ էլ բացվեն, սակայն այն ժամանակաշրջանի համար, ճիշտ որ, օֆիցիոզը (Անդրկովկասյան կոմիտե) ավելի լավ ճանապարհ ընտրել չէր կարող: Չմայած, ինչպես իրական պատմությունն է ապացուցում, միմյանց նկատմամբ սեր և ջերմություն հանդես բերելու համար ոչ մի հրահանգ էլ անհրաժեշտ չէր Ակակին և Գաբրիել Սունդուկյանին, Հովհ. Թումանյանին և Տիցիան Տաբիժեին, Ավ. Իսահակյանին և Իոսեբ Գրիշաշվիլուն, Վահան Տերյանին և Գրիգոր Ռոբաքիժեին, Ալ. Շիրվանզադեին և Վալսո Աբաշիժեին, Եղիշե Չարենցին և Յակոբ Նիկողաժեին և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գիորգի Տիցիշվիլի, Վրաց ժողովրդի գրական հարաբերությունները տարբեր ազգությունների հետ և նրանց ուսումնասիրությունը մեր ժամանակներում, «Գրականությունը և ժամանակը», Թբիլիսի, 1981:
2. Բոնդո Արվելաժե, Վրաց-հայկական գրական հարաբերությունների պատմությունից, Ավ. Իսահակյանը և վրաց գրականությունը, Թբիլիսի, 1967:
3. Арташес Мхитарян, Армяно-грузинские литературные взаимосвязи, Армянская литература в Грузии, Тбилиси, 1982.
4. Գրիգոր Ռոբաքիժե, Հայաստան, «Վրաստանի գրողները», 1929, N 6-7: